ԿԱՐԾԻՔ

Նոնա Վահանի Գյուլամբարյանի „ Կառավարման դեստրուկտիվ մոտիվացիայի դրսևորումները արժեհամակարգի վերափոխման համատեքստում ԺԹ.00.03 – Սոցիալական հոգեբանություն մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ատենախոսության

Ժամանակակից հասարակություններում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական, ռազմա-քաղաքատան, գիտա-մշակութային զարգացումները կառավարվում են կոնկրետ գաղափանների հիման վրա: Դրանք իրենց նշանակելիությամբ և կիրառական ուղղվածությամբ պարտադիր կրում են հեղինակների, անձնային առանձնահատկությունների, նրանց հոգեկան կերտվածքի հոգեբանական կնիքը: Դրանց կառուցվածքում առանցքային տեղ են զբաղեցնում անձի գիտակցված մոտիվների համակարգությունը, որոնց բավարարումն ու դրանց հետագա զարգացումները, փոփոխությունները լուրջ ազդեցություն են ունենում գործունեության կառավարման տարբեր գործընթացների վրա::

Անձի հոգեհիգիենայի և նրա բազմակողմանի պատրաստության հիմնահարցի տեսանկյունից մոտիվների ուսումնասիրության ուղղությամբ գոյություն ունեն բավականին շատ գիտական աշխատանքներ: Սակայն դեստրուկտիվ մոտիվների հիմնահարցի վերաբերյալ ուսումնասիրությունները հատկապես սոցիալական հոգեբանության բնագավառում աղքատիկ են, առավել ևս անձի արժենամակարգի համատեքստում դրանց ուսումնասիրությունները բավարար չեն: Մյուս կողմից աշխարհում ժամանակակից հասարակությունների միջև գոյություն ունեցող ռազմաքաղաքկան մրցակցության, գլոբալիզացիայի գործընթացները, լայն զանգվածների համար առաջացնում են բազմաթիվ դեֆիցիտներ, արժեհամակարգության փոփոխություններ, որոնք խիստ բացասաբար են անդրադառնում մարդկանց գիտակցության, աշխատանքային գործունեության

արդյունավետության վրա: Այս տեսանկյունից Նոնա Վահանի Գյուլամբարյանի կողմից առաջադրված թեման արդիական է, ունի գիտական և կիրառական մեծ կարևորություն:

Ատենախոսական աշխատանքը բաղկացած է ներածությունից, հիմնական բովանդակությունը ներկայացնող երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, 21 աղյուսակներից և 13 գծագրերից:

,,Ներածություն,, բաժնում համառոտ հիմնավորվում են աշխատանքի արդիականությունն ու գիտա-գործնական նշանակությունը, վարկածի, նպատակի ու առաջադրված խնդիրների իրականացման ռազմավարությունը, հետազոտության օբյեկտն ու առարկան, ատենախոսության գիտական նորույթն ու գործնական նշանակությունը: Հատկանշական է հետազոտության նպատակով հեղինակի կողմից առանձնացված խմբերի կառցվծքների և հետազոտության մեթոդների ընտրության, ինչպես նաև գործընթացի կազմակերպման համար մշակված ռազմավարությունների նախընտրելի նպատակահարմարության մեկնաբանումները:

,,Դեստրուկտիվ մոտիվացիայի ֆենոմենը սոցիալ-հոգեբանական գիտակարգում,, տեսական խնդիրների վերլուծության առաջին գլխում Նոնա Գյուլամբարյանը անդրադառնում է մոտիվացիայի տեսությունների սոցիալ-հոգեբանական վերլուծություններին, որոնցում վեր են հանվում տարբեր գիտական դպրոցների գիտնականների հայեցակարգային առանձնահատկությունները: Հեղինակը անդրադառնալով աշխատանքային գործունեության մոտիվներին, վերլուծությունների շնորհիվ ցույց է տալիս դրանց ձևավորման և դրսևորման բազմազանությունները, գործառնական փոփոխությունների բնութագրերն ու սոցիալ-հոգեբանական պատճառականությունները: Այնուհետև անդրադարձ է արվում դեստրուկտիվ մոտիվների ձևավորման մեխանիզմների մեկնաբանմանը, կարևորելով անձնային հատկանիշների բնութագրերը, աշխատանքի վերջնարդյունքի նկատմամբ անձի ակընկալիքները, ներդրվող ջանքերին տրվող գնահատականներն ու խրախուսման ձևերը: Այնուհետև լուսաբանվում են աշխատանքի կառավարման դեստրուկտիվ մոտիվների բնորոշ հատկանիշները, որոնց ուսումնասիրություններում հեղինակը

կարևորում է մոդելավորման պրակտիկան, դրանց ձևավորման անձնային և սոսիալ-տնտեսական պատճառականությունները, դեստրուկտիվ մոտիվների ձևավորման մակարանդրակները: Հեղինակը դեստրուկտիվ մոտիվների տեսական գաղափարների ուսումնասիրման հիման վրա անդրադառնում է նաև դրանց գիտական սահմանումների պարզաբանման խնդիրներին, դրանցում գոյություն ունեցող հակասությունների մեկնաբանումներին:

Աշխատանքի կառավարման դործընթացը տեղի է ունենում որոշակի սոցիալ-հոգեբանական մթնոլորտում, միջանձնային հարաբերությունների պայմաններում, որը մշտապես ուղեկցվում է մասնակիցների ապրումների, տարաբնույթ հույզերի առկայությամբ: Այս տեսանկյունից, մանրակրկիտ քննարկվում և վերլուծությունների են ենթարկվում մասնագիտական գրականության կոնկրետ աղբյուրներ, որոնցում արտացոլված են գործունեության տարբեր ոլորտների հետազոտական աշխատանքներ:

Ն.Գյուլամբարյանի ուսումնասիրություններն ու վերլուծությունները ուղղված են նաև սթրեսի տարաբնույթ ծագումնաբանության և ազդեցության առանձնահատկություններին, աշխատանքային գործունեության բնագավառում, ինչպես նաև կենսագործունեության տարբեր ոլորտներում անձի սթրասակայունության, հարմարման, մասնագիտական այրման հիմնախնդիրների գիտական մեկնաբանումներին: Ատենախոսության այս գլխի տեսական խնդիրների վերլուծություններն պմփոփվում են հեղինակի կողմից արվող հետևությունների, գիտականորեն հիմնավորված եզրակացությունների ձևով:

Ատենախոսության ,,Կառավարման դեստրուկտիվ մոտիվացիայի ֆենոմենն արժեհամակարգի վերափոխման տեսանկլունից,, տեսական խնդիրների վերլուծություններին վերաբերվող գլուխը բովանդակում է արժեհամակարգի վերափոխման սոցիալ-հոգեբանական մեկնությունները, արժեհամակարգի մոտիվացիոն բնութագրերի վերլուծությունները, ինճպես նաև արժեհամակարգի

վերափոխման համատեքստում կառավարման դեստրուկտիվ մոտիվացիայի հայեցակարգային խնդիրների դրվածքի գիտական ուսումնասիրությունները:

Արժեհամակարգային կառույցները հանդիսանում են անձի, ազգի, հասարակության գոյաբանական իմաստի, նրա ինքնության ու պատմական միսիայի նշանակելիության հենքը: Դրանցով են պայմանավորված ժամանակների հոգեբանական կապի ու նշանակելիության իմաստավորումը, դրանցում տեղի ունեցող պատմամշակութային, քաղաքական եղելությունների գնահատումը: Դեռ ավելին, հոգեհիգիենայի տեսանկյունից, անկախ հանգամանքների փոփոխության, անձի ամբողջականությունն ու հոգեկան առողջությունը գնահատվում է նաև արժեքների ընկալման վերաբերյալ հասարակության կողմից ընդունված և անձի մոտ գոյություն ունեցող պատկերացումների ու դրանց տրվող գնահատականների ընդհանությամբ: Այս տեսանկյունից, արժեքների սահմանման, դրանց տեսակավորման, ինչպես նաև դրանց ուղղվածության սոցիալական, տնտեսական, քաղաքական, բարոյահոգեբանական բնութագրերի, ձևավորման առանձնահատկությունների հիմնախնդրի մեկնաբանումները հնարավոր են դարձնում հասկանալու նաև հասարակության մեջ անձի դեստրուկտիվ, ասոցիալ վարքագծի ձևավորման, հասարակության կողմից չընդունված արժեհամակարգերի փոփոխության մեխանիզմները: Արդյունքում հնարավորություն է ստեղծվում նաև մշակելու հոգեբանական կանխարգելման և ուղեկցման անհրաժեշտ աշխատանքների արդյունավետ ծրագրեր:

Ըստ հեղինակի կողմից արված հետևությունների, աշխատանքային գործունեության կառավարման տեսանկյունից արժեհամակարգի մոտիվացիոն բաղադրիչը բացահայտում է անձի արժեքային առաջնահերթությունների համապատասխանելիությունը սոցիալական միջավայրի կողմից առաջադրված աշխատանքային էթիկայի պահանջներին: Այս տեսանկյունից հեղինակի կողմից կարևորվում են աշխատանքային միջավայրում գոյություն ունեցող արժեհամակարգության մոտիվացնող բաղադրիչի անձնային, սոցիալ-տնտեսական, հոգեբանական նախադրյալների ուսումնասիրման հիմնախնդիրների

մեկնաբանումները: Քննարկվում են նաև աշխատանքային վարքագծի դեստրուկտիվ և կառուցողական մոտիվների համակարգության հիմնախնդրի հոգեվերլուծական և կոգնիտիվ տեսությունների մեկնաբանումները, արժեհամակարգային հատկանիշների ձևավորման սոցիալ-հոգեբանական,, անձնային առանձնահատկությունները: Դրանցում հեղինակը առանձնացնում է սթրեսային գործոնների կարևորումը, որպես ապակառուցողական հոգեվիճակների, տրամադրությունների ու վարքագծի ձևավորման պայման: Մասնագիտական գրականության վերլուծությունը հեղինակին հնարավորություն է ընձեռնում նաև առանձնացնել կառավարման դեստրուկտիվ մոտիվացիայի հայեցակարգային սխեմատիկ մոդելը, որում ի ցույց են դրվում կառավարման դեստրուկտիվ մոտիվացիայի բաղադրիչները, կատարվում դրանց ճանաչողական, վարքային, հուզական փոփոխությունների սոցիալ-հոգեբանական մեկնաբանումները: Հեղինակը վերլուծությունները ամփում է այն եզրակացությամբ, որ կառավարման դեստրուկտիվ մոտիվացիայի վերաբերյալ սոցիալ-հոգեբանական մեկնաբանումների արդյունքում հնարավորություն է ստեղծվում բնութագրել հիմնախնդրի անձնային և սոցիալական գործոններով պայմանավորված արժեքային կողմնորոշիչների վերափոխման դրսևորումները, կառավարման գործընթացում դրանց ազդեցությունների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները:

Ատենախոսական աշխատանքի երրորդ գլուխը նվիրված է փորձարարական հետազոտության մեթոդների, նկարագրմանը, կիրառման առանձնահատկություններին: Այս բաժնում ներկայացվում են հետազոտությունների կազմակերպման ռազմավարության, ինչպես նաև հետազոտվող համակազմի, խմբերի ձևավորման պահանջները,, ինչպես նաև օգտագործված մաթեմատիկական վիճակագրական մեթոդների նկարագրությունը, հետազոտության արդյունքների մասնագիտական վերլուծությունների ուղղվածությունը:: Հարկ է նշել, որ ընտրված հետազոտության մեթոդների մարտկոցն ու վիճակագրական մեթոդների համախումբը իր կիրառականությամբ, արդյունքների մշակման բարձր հնարավորություններով առանձնակի արժևորում են փորձարարական հետազոտությունների ճշգրտությունը,

ստացված արդյունքների հավաստիությունը, որոնք արտացոլված են նաև հետազոտության արդյունքներն ամփոփող աղյուսակների, և գծագրերի տեսքով:

Փորձարարական հետազոտություններն իրականացվել են փուլ առ փուլ, ընդ որում ըստ նախօրոք մշակված ռազմավարական ծրագրի, առաջին փուլում գնահատվել են ուսումնասիրվող արժեքները, ինչպես նաև աշխատանքային գործունեության կառավարման մոտիվացիոն դաշտը: Երկրորդ փուլում բացահայտվել են արժեքների վերափոխման տեսանկյունից դրանց կարևորման աշխարհագրությունը, կառավարման դեստրուկտիվ մոտիվների, դրանց ձևավորման և զարգացման ընթացքը, ինչպես նաև դեստրուկտիվ մոտիվացիայի բնորոշ հատկանիշները: Հետազոտության երրորդ փուլում ֆոկուս խմբերի հետ կազմակերպվել են երկու ամիս տևողությամբ քննարկումներ և թրենինգներ, որոնցում իրականացվել են դեստրուկտիվ մոտիվացիայի հիմնական հատկանիշները, դրանց ձևավորման սոցիալ-հոդեբանական պայմանները և այլն: Այնուհետև մշակված պլանի համաձայն իրականացվել են առաջադրված խնդիրների ողջ փաթեթը, որից հետո իրականացվել են ռեթեստավորման աշխատանքները, բացահայտելու արժեքների նշանակելիության հիերարխիան, իրավիճակի, արժեքների փոփոխության դեպքում դիտարկվող դեստրուկտիվ մոտիվների փոփոխության յուրահատկությունները: Այնուհետև ըստ հետազոտության իրականացման տրամաբանության, հետազոտության մարտկոցում ընդգրկված մեթոդների օգնությամբ կազմակերպվել են առաջադրված խնդիրների իրագործումը: Հետազոտությունների արդյունքները ըստ կատարված աշխատանքների հերթականության և առաջնության արտացոլվում են աղյուսակների, գծագրերի ու դիագրամների տեսքով, որոնց մի ստվար մասը տեղ են գտել հավելվածում: Դրանց քննարկումները, վերլուծությունները ներկայացնում են առաջադրված խնդիրների լուծման ընթացքը, հետևությունների, արված եզրակացումների գիտական հիմնավորումները: Արդյունքների վերլուծությունները աչքի են ընկնում գործոնների դիտարկման նրբանկատությամբ և բազմակողմանի արժեվորման պրոֆեսիոնալիզմով, որոնց հավաստիությունն ու ապացուսողականությունը ամրակայվում է կիրառված

մաթ ապարատի շնորհիվ: Հետազոտությունն ավարտվում է հիմնարար եզրակացություններով, գործնական առաջարկություններով և հանձնարարականներով:

Ատենախոսական աշխատանքին կից ներկայացվող սեղմագիրը իր կառուցվածքային, և բովանդակային բնութագրերով, հասկացությունների ձևակերպման պահանջներով, գիտական խնդիրների մեկնաբանման հնարավորություններով համապատասխանում է ատենախոսության մեջ լուծված խնդիրների լուսաբանման բոլոր պահանջներին: Չնայած որ աշխատանքը իրականացվել է բարձր գիտական պահանջների շրջանակներում , այնուամենայնիվ ունենք որոշ նկատառումներ, որոնք կուզեինք ներկայացնել:

1. Հետազոտության բազմաթիվ մեթոդների և առաջադրված խնդիրների համալիրում նպատակահարմար կլիներ նաև տեղ գտնեյին անձնային առանձնահատկությունների ուսումնասիրման գործիքներ, ինչը հնարավորություն կտար էլ ավելի տեսանելի դարձնելու դեստրուկտիվ մոտիվների ծագումնաբանական և դրանց փոփոխությունների մեխանիզմները, ինչպես նաև արդյունավետ դարձնելու հետագայում կազմակերպվելիք դիագնոստիկ և կանխարգելիչ, հոգեբանական ուղեկցման աշխատանքների ընթասքը։
2. Աշխատանքային գործունեության բնագավառում իրականացված հետազոտություններում ինչքանով է հաշվառվել գործունեության բնույթի առանձնահատկությունները(կառավարման անհրաժեշտ ոճերը, դրանց յուրահատկությունները ,մասնագիտական, ֆինանսական և այլ բնույթի գրավչությունը, եկամտաբերությունը, անձի նկատմամբ առաջադրվող պահանջները և այլն), ինչքանով են հաշվառված մասնագետների պրոֆեսիոնալ, կրթական, աշխատանքային փորձի, և այլ պահանջներ:

Կարծում եմ, որ նշված նկատառումները բոլորովին չեն ստվերում ատենախոսական աշխատանքի գիտական արժեքը, տեսական և էքսպերիմենտալ հետազոտությունների, գիտա-գործնական կարևորությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Ն. Գյուլամբարյանի ,, Կառավարման դեստրուկտիվ մոտիվացիայի դրսևորումները արժեհամակարգի վերափոխման համատեքստում ԺԹ.00.03 – Սոցիալական հոգեբանություն մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ատենախոսությունը հանդիսանում է ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք: Այն իր կառուցվածքային և բովանդակային կողմերին ներկայացվող պահանջներով համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական աշխատանքներին և գիտական աստիճանաշնորհմանը ներկայացվող բոլոր պահանջներին:
2. Նոնա Վահանի Գյուլամբարյանը իր կողմից ներկայացված ,Կառավարման դեստրուկտիվ մոտիվացիայի դրսևորումները արժեհամակարգի վերափոխման համատեքստում,, թեմայով ԺԹ.00.03 – Սոցիալական հոգեբանություն մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն համար արժանի է հայցվող աստիճանին:

Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ. Մկրտումյան:

ՀՊՄՀ-ի գիտական գծով պրոռեկտոր Մ. Իսպիրյան

Պրոֆեսոր Մ.Մկրտումյանի ստորագրությունը հաստատում եմ:

27. 01. 25 թ.